ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ *Հոգեբանական գիտելիքների տեղը և դերը դասավանդվող առարկայի մեթոդիկայի կառուցվածքում*

Կատարող՝ *Լիլիկ Ղազարյան*

Առարկա՝ *Հայոց լեզու և գրականություն*

Ուսումնական հաստատություն՝ *Հրազդանի Անանիա Շիրակացու անվան N6 հիմնական դպրոց*

ՀՐԱԶԴԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն- -2

Գլուխ 1

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԻ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

1.1.Դեռահասության տարիքի էական առանձնահատկությունները.....4

1.2. Իմացական գործընթացներ, դրանց զարգացումը դեռահասության տարիքում.....7

ԳԼՈՒԽ 2

Փորձարարական մաս.....13

Հետազոտության արդյունքներ.....20

Եզրակացություն.....21

Օգտագործված գրականության ցանկ.....22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր մանկավարժ պետք է տիրապետի հատուկ գիտելիքների, կարողությունների և հմտությունների, որպեսզի կարողանա ավելի հեշտ և արդյունավետ աշխատել կրթվողների և դաստիարակվողների հետ: Յուրաքանչյուր մանկավարժ պետք է իմանա մանկավարժական վարպետության ամեն մի տարր, որպեսզի նրա ծավալած կրթական, դաստիարակչական գործունեությունը ավելի արդյունավետ լինի և ավելի լավ արդյունքներ տա:

Ուսուցչի մանկավարժական վարպետությունը դրսևորվում է գլխավորապես դասի նախապատրաստական, կազմակերպման և վարման գործում:

Դասապրոցեսում իրենց արտացոլումն են գտնում ուսուցման գործընթացի բովանդակությունը, սկզբունքները, միջոցները, մեթոդներն ու հնարները, ուսուցչի ու աշակերտների միջև ձևավորված հարաբերությունների ոճը:

Մանկավարժը չպետք է սահմանափակվի իր ունեցած գիտելիքներով, պետք է անընդհատ կատարելագործվի: Մանկավարժը պիտի միշտ նոր գիտելիքներ փնտրի և յուրացնի նոր կարողություններ, հմտություններ: Այս ամենը նա պետք է անի ինքնադաստիարակության, ինքնակրթության, ինքնատիրապետման միջոցով: Այս տեսանկյունից խիստ կարևոր է հոգեբանական գիտելիքներին տիրապետելը: Մանկավարժական գործընթացում աշակերտների տարիքային և անհատական, անձնային (խառնվածք, բնավորություն, իմացական գործընթացներ, հուզակամային և դրդապատճառային ոլորտներ), առանձնահատկությունների իմացությունն ու վերջիններիս հաշվառումը կարող է բարձրացնել դասի կազմակերպման և կառավարման գործընթացի և մանկավարժական հաղորդակցման արդյունավետությունը, ինչպես նաև չեզոքացնել մանկավարժական կոնֆլիկտները:

Մեր հետազոտության նպատակն է՝ մշակել այնպիսի մանկավարժական մեթոդներ, որոնք կբարձրացնեն աշակերտների իմացական գործընթացների կառավարման արդյունավետությունը և կթուլացնեն առաջացած դժվարությունները:

Ըստ այդմ՝ մեր հետազոտության խնդիրն է ուսումնասիրել աշակերտների ընկալման և հիշողության տիպերը, որոնց իմացությունը հնարավորություն կտա մշակել համապատասխան հնարներ ու մեթոդներ մեր նպատակին հասնելու համար:

Գլուխ 1

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԻ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

1.1.Դեռահասության տարիքի էական առանձնահատկությունները

Քանի որ մեր կողմից ***Մայրենի*** առարկան դասավանդվում է 6-րդ դասարանում, որը համապատասխանում է դեռահասության տարիքային փուլին, իսկ վերջինս համարվում է ճգնաժամային, բարդ և բեկումնային տարիք, ապա նախ և առաջ կարևորվում է տվյալ տարիքի մասին հոգեբանական գիտելիքների իմացություն և հաշվառում:

Դեռահասությունը մանկության և հասնության միջև օնտոգենետիկական զարգացման շրջան է (11-16տարեկան), որը բնութագրվում, հատկանշվում է որակական փոփոխություններով՝ կապված սեռական հասնության և <<մեծահասակների աշխարհ>> մուտք գործելու հետ:

Դեռահասությունը անձի զարգացման տեսակետից համարվում է ամենաբարդ, ճգնաժամային շրջան: Այս ընթացքում ձևավորվում են անձի բարոյական, հասարակական ընկալումները, վերաբերմունքը իր, շրջապատող մարդկանց, հասարակության նկատմամբ: Այս շրջանը աշխարհայացքների, բարոյական համոզմունքների, սկզբունքների և իդեալների, գնահատման դատողությունների ձևավորման տարիք է, որոնցով դեռահասը սկսում է առաջնորդվել իր կյանքում:

Այս տարիքում օրգանիզմը լուրջ ֆիզիոլոգիական փոփոխությունների է ենթարկվում:

Դեռահասության շրջանում դրսևորվող կամակորությունը հաճախ կապված է սկզբունքայնության, անկախության և ինքնուրույնության մասին ունեցած սխալ պատկերացման հետ:

Մալիվանովը դեռահասներին բաժանելի է չորս խմբի.

- Դեռահասներ, որոնք իրենց վարքում ղեկավարվում են իրենց կողմից լավ գիտակցված դրական բարոյական նորմերով, և որոնց մոտ խոսքի և գործի միջև հակասություն չկա:
- Դեռահասներ, որոնց մոտ համընկնում են բարոյական հասկացությունների զարգացման ցածր մակարդակը և վարքը:
- Դեռահասների մի փոքր խումբ /առանձին աշակերտներ՝խմբավորված/ առաձնանում է վարքի բարոյական նորմերի իր քաջատեղյակությամբ, բայց իր համար անհրաժեշտ չի համարում վարվել ըստ այդ նորմերի
- Դեռահասներ, որոնք դեռ չեն տեսնում, չեն հասկանում այն կապը, որ գոյություն ունի իրենց հայտնի բարոյականության պահանջների և իրենց առօրյա արարքների միջև:

Դեռահասության փուլում ճգնաժամը ընթանում է ավելի բուռն և կրում է առավել տևական բնույթ, քան մյուս տարիքային ճգնաժամերի համար: Բոժովիչը դա բացատրում էր նրանով, որ դեռահասների մտավոր և ֆիզիկական զարգացումն ավելի արագ է ընթանում՝ հանգեցնելով դեռահասի մոտ նոր ֆիզիկական պահանջմունքների ձևավորմանը:

Ս.Հոլլը, որպես ճգնաժամի բնութագրիչ, առանձնացնում է ինքնագիտակցության ճգնաժամը, որը հաղթահարելով՝ դեռահասը ձեռք է բերում <<անհատականության զգացում>>:

Այս ճգնաժամը ներանձնային և միջանձնային կոնֆլիկտների արտահայտման բուռն շրջան է: Դեռահասության ճգնաժամի պատճառ է երեխայի ֆիզիոլոգիական, սոցիալական և հոգեկան զարգացման տեմպերի անհամապատասխանությունը: Այս տարիքի բուռն խնդիրները կապված են դեռահասների կարևորագույն պահանջմունքների բավարարման հետ, որոնց թվին են պատկանում՝

- ֆիզիոլոգիական պահանջմունքները
- ապահովության պահաջմունքը
- ընտանիքից անկախ լինելու պահանջմունքը /ինքնահաստատում, ինքուրույնություն/
- կապվածության պահանջմունք
- հաջողության պահանջմունք
- ինքնաիրացման, իրական <<ԵՍ>>-ի պահանջմունք

Դեռահասը ձեռք է բերում հասունության զգացում, կողմնորոշվում է իր սոցիալական դերերում, գտնում իր դերը շրջապատում:

Լ.Ի.Բոժովիչը դեռահասության ճգնաժամի գործընթացում կարևորում է նոր ի հայտ եկած պահանջմունքների ֆրուստրացիայի գործոնը. «Դեռահասության ճգնաժամը, ի տարբերություն մյուս տարիքների ճգնաժամերի, ավելի սուր և ձգձգված բնույթ է կրում, քանի որ ֆիզիկական և մտավոր արագ զարգացման հետևանքով դեռահասի մեջ ի հայտ են գալիս մի շարք այնպիսի պահանջմունքները, որոնք այդ տարիքի դպրոցականների ոչ բավարար սոցիալական զարգացման հետևանքով չեն

կարող բավարարվել: Այսպիսով՝ այս ճգնաժամային շրջանում պահանջմունքների դեպրիվացիան շատ ավելի ուժեղ և դժվար հաղթահարելի է, քանի որ դեռահասի ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացման մեջ սինխրոնությունը բացակայում է»: [1]

1.2. Իմացական գործընթացներ, դրանց զարգացումը դեռահասության տարիքում

<<Առանց հիշողության մենք կլինենք լոկ ակնթարթի էակներ ...>>

Ս. Լ. Ռուբինշտեյն

Ուշադրություն-դեռահասը կարող է ուշադրությունը լավ կենտրոնացնել իր համար նշանակալի գործունեության վրա: Ուշադրությունը դառնում է լավ կառավարելի, վերահսկելի գործընթաց:

Ընբռնումը այն գործընթացն է, որի միջոցով արտացոլվում է անձի վրա անմիջականորեն ազդող առարկայի, երևույթի ամբողջական պատկերը:

Ընբռնումը իմաստավորված ընկալումն է: Ընկալումն անմիջական ազդեցություն է (պերցեպցիա), իսկ ընբռնումը անցյալի փորձով, մարդու գիտելիքներով լրացված, տվյալ սուբյեկտի գիտակված արդյունք է:

Ընկալման գործընթացներն են հայտնաբերումը, պատկերի ստեղծումը և ճանաչումը:

Ընկալման գործընթացում կարևոր դեր են խաղում 4 վերլուծիչներ՝ տեսողական, լսողական, շարժողական և շոշափման:

Ըստ ըմբռնման գործընթացին մասնակցող առաջատար վերլուծիչի ակտիվության՝ տարբերվում են տեսողական, լսողական, շոշափման, շարժողական (կինեսթետիկ), հոտառական և համի ընկալումներ։

Առանձնացվում են տարածության, ժամանակի, շարժումների, խոսքի, երաժշտության և այլ ըմբռմնումներ։

Տեսողական ընկալումը տեսողական դաշտի տարրերի ամբողջական պատկերներ ստեղծելու գործընթացն է։ Այն անմիջականորեն կապված է տարածական տեղեկույթի վերամշակման հետ։

Շոշափելիքային ըմբռնում-շոշափելիքային պատկերը ստեղծվում է մաշկային (հպման և ջերմության) և մկանաշարժողական անալիզատորների միջոցով:

Մարդու կողմից ուրիշների հոգեբանական հատկությունների, հույզերի, բնույթի ըմբռնումն ու գնահատումը կատարվում է անձի կենսափորձի և գիտելիքների հիման վրա։

Գեյլ Վուդ-Մյուլլերը կարծում է, որ ընկալման տիպով պայմանավորված յուրաքանչյուր մարդու հատուկ է ուսումնառության գերակայող ոճ: Նա առանձնացրել է ուսումնառության 5 հիմնական տիպեր և գտնում է, որ յուրաքանչյուր անձ ունի իր ոճերի համադրությունը՝ կախված այն բանից, թե ինչ է ուսումնասիրում:

Ուսումնառության հիմնական ոճերն ըստ Գեյլ Վուդ-Մյուլլերի՝

Վիզուալ –*հանգուցային բառը՝ տեսողություն:* Եթե անձին դուր է գալիս նայել նկարներ, ֆիլմեր, նկարել կամ գունազարդել, եթե ամենավառ հիշողությունները կապված են տեսողական տպավորությունների հետ, ամենայն հավանականությամբ նա պատկանում է ուսումնառության այդ տիպին:

Աուդիալ- *հանգուցային բառը՝լսողություն:* Եթե անձն ավելի հաճույքով է լսում ռադիո կամ ձայնագրություններ, քան կարդում այս կամ այն նյութը, ամենայն

հավանականությամբ նա լավագույն արդյունքի կհասնի՝ օգտագործելով ուսումնառության այս ոճը:

Հաջորդական- *հանգուցային բառը՝ կարգ ու կանոն:* Եթե անձին դուր է գալիս լուծել խաչբառեր և մաթեմատիկական խնդիրներ, լրացնել աղյուսակներ և անել այլ այնպիսի գործողություններ, որոնցում կարևոր են կարգն ու հաջորդականությունը, տվյալ մարդու բնորոշ է հենց այս ոճը:

Համընդհանուր- *հանգուցային բառը՝ ընդհանուր տեսք:* Այս ոճը համապատասխանում է նրանց, ովքեր տեսնելով կամ լսելով որևէ ինֆորմացիա, գլխում ձևավորում են վերջինիս համապատասխան նկարներ կամ գրաֆիկներ: Ուսուցման այս տիպին բնութագրական է երևույթների՝ ամբողջության մեջ ընկալման ունակությունը՝ անգամ մանրամասն չիմանալով ինֆորմացիան:

Կինեսթետիկ- *հանգուցային բառը՝ շարժում:* Եթե անձին դուր է գալիս լինել շարժման մեջ, նոր ինֆորմացիան առավել լավ նա յուրացնում է պրակտիկ գործունեության մեջ, նա հավանաբար պատկանում է ուսուցման այս ոճին:

Ուսումնառության ոճերի իմացությունը կարևոր է, քանի որ այդ նախընտրություններն են կառավարում ուսուցման գործընթացը: Վերջիններս ազդեցություն են ունենում այն բանի վրա, թե սովորողներն ինչպես են մտապահում ինֆորմացիան, ինչպես են իմաստավորում փորձը, անգամ բառերը, որոնք նրանք ընտրում են:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուսումնառության տարբեր ոճերը թույլ են տալիս ակտիվացնել ուղեղի տարբեր մասեր, իսկ ուղեղի որքան շատ հատվածներ ընդգրկված լինեն, այնքան արդյունավետ կլինի ուսուցման գործընթացը:

Հիշողությունն ընկած է մյուս հոգեկան գործընթացների հիմքում: Ինչ էլ կատարելիս լինի մարդը, նա միշտ այս կամ այն չափով գիտակցորեն, թե ենթագիտակցորեն

օգտագործում է իր հիշողության մեջ պահպանված գիտելիքների տարբեր բաժիններ: Բայց հիշողությունը նաև մարդու անձի, նրա ես-ի ու ինքնագիտակցության ամբողջականության ու անընդհատության հիմքն է:

Կախված գործունեության նպատակներից՝ հիշողությունը բաժանվում է կամածին և ոչ կամածին տեսակների: Այնպիսի մտապահումը և վերարտադրությունը, որոնցում բացակայում է ինչ-որ բան մտապահելու հատուկ նպատակը, կոչվում է ոչ կամածին հիշողություն: Կամածին և ոչ կամածին հիշողությունը միաժամանակ հիշողության զարգացման երկու հաջորդական աստիճաններն են: Սակայն մարդու գործունեության ընթացքում հաճախ հիշողությունը կառավարելու անհրաժեշտություն է ծագում: Այդ պայմաններում կարևոր դեր է խաղում կամածին հիշողությունը, որը հնարավորություն է տալիս կանխամտածված ձևով սովորել և վերհիշել այն, ինչ անհրաժեշտ է: Որպեսզի այս կամ այն նյութը ամրանա հիշողության մեջ, սուբյեկտի կողմից այն պետք է համապատասխան վերամշակման ենթարկվի: Այդ վերամշակումը որոշակի ժամանակ է պահանջում: Ի տարբերություն տևական հիշողության, որին բնորոշ է բազմակի կրկնություններից ու վերարտադրություններից հետո նյութի երկարատև պահպանումը, կարճատև հիշողությունը բնորոշվում է մեկ անգամ ոչ տևականորենը ընկալելուց հետո կարճատև պահպանմամբ և անմիջապես վերարտադրմամբ:

Կան հիշողության այնպիսի տեսակներ, որոնց մտապահումը պահպանումը և վերարտադրումը կախված են գործող անալիզատորի, այսինքն՝ ինֆորմացիայի ստացման ուղու տեսակից: Դրանք միավորվում են պատկերավոր հիշողություն հավաքական անվան տակ: Լինում են՝ լսողական, տեսողական, համի, հոտառական, շոշափելիքի.:

Տեսողական հիշողություն- Ինֆորմացիան տեսողության օգնությամբ մտապահելու, պահպանելու և վերատադրելու երևույթն է: Հիշողության այս տեսակը բավականին բարձր մակարդակի վրա է տարբեր մարդկանց մոտ, բացի ի ծնե կույր մարդկանց: Մարդիկ իրենց գիտելիքի 60-90 % -ը ստանում են տեսողության օգնությամբ: Լավ

տեսողական հիշողություն ունեցող երաժիշտը նվագելիս մտքում կարող է տեսնել նոտան: Տեսողական արտակարգ հիշողություն ունեն տաղանդավոր շախմատիստները, նրանք մտքում պահում են տախտակի վրա կատարվող բոլոր իրադարձությունները.

Լսողական հիշողություն-Ինֆորմացիան լսողությամբ ընկալելու, մտապահելու և վերարտադրելու երևույթն է: Հիշողության այս տեսակը նույնպես հսկայական նշանակություն ունի մարդու կյանքում, թեև իր արդյունավետությամբ հետ է մնում տեսողական հիշողությունից:

Բնական է, որ հատկապես բարձր զարգացման է հասնում երաժիշտների լսողական հիշողությունը: Արտակարգ լսողական էյդետիզմ ունեցող մարդու համար բավական է մեկ անգամ լսել որևէ երաժշտություն, և նա կարող է ճշտությամբ վերարտադրել այն: Լսողական հիշողության համար կարևոր է ռիթմի վերարտադրությունը: Երբեմն պատահում է, որ մենք ցանկանում ենք վերհիշել նախկինում անգիր արած բանաստեղծության բառերը և անմիջապես վերարտադրել չենք կարողանում, բայց ռիթմը վերարտադրում ենք:

Հոտառության, ճաշակելիքի և շոշափելիքի օգնությամբ ինֆորմացիայի մտապահումն ու վերարտադրությունը ժամանակակից մարդու կյանքում երկրորդական նշանակություն ունեն, որի հետևանքով պատկերավոր հիշողության համապատասխան տեսակները հազվադեպ են բարձր զարգացման հասնում: Մարդկանց համար սովորաբար ավելի հեշտ է հիշելը ընկալման տեղն ու վայրը և առարկայի տեսողական պատկերը, քան վերը հիշատակված մտապատկերները: Որոշ դեպքում պատկերավոր հիշողության այս տեսակները բարձր զարգացման են հասնում այլ զգայարանների անբավարար աշխատանքը փոխհատուցելու անհրաժեշտության հետևանքով:

Շարժողական հիշողությունը անհատի կողմից իր իսկ կատարած շարժումներն ու դրանց համակարգերը մտապահելու, պահպանելու ու դրանք վերարտադրելու երևույթն է: Հիշողության այս տեսակը ընկած է մասնագիտական և մարզական հմտությունների հիմքում:

Հիշողության արդյունավետությունը կախված է ուշադրության կենտրոնացման աստիճանից, ընկալվող նյութի կարևորությունից ու հետաքրքրությունից և օրգանիզմի ընդհանուր վիճակից :

Պետք է նշել, որ դեռահասն ընդունակ է կառավարել իր կամածին մտապահումը, օգտագործել տարբեր մնեմիկ միջոցներ: Դեռահասների մոտ առավելապես գերիշխում է իմաստային հիշողությունը, այն ձեռք է բերում միջնորդավորված, տրամաբանական բնույթ՝ մտածողության պարտադիր մասնակցությամբ:

Լ. Վիգոտսկին, ինչպես և Ժ. Պիաժեն հատուկ ուշադրություն են դարձրել դեռահասության տարիքում մտածողության զարգացման վրա: Մտածողության զարգացման մեջ գլխավորը դեռահասի կողմից հասկացությունների ձևավորման գործընթացին տիրապետելն է, որը տանում է ինտելեկտուալ գործունեության բարձրագույն ձևին, վարքի նոր եղանակներին: Ըստ Լ. Վիգոտսկու՝ հասկացությունների ձևավորման ֆունկցիան ընկած է այս տարիքում բոլոր ինտելեկտուալ փոփոխությունների հիմքում: Համաձայն Լ. Վիգոտսկու՝ էական փոփոխություններ տեղի են ունենում այս տարիքում նաև երևակայության զարգացման մեջ: Վերացական մտածողության ազդեցությամբ երևակայությունը «անցնում է ֆանտազիաների ոլորտը»: Դեռահասը թաքցնում է իր ֆանտազիաները՝ որպես «թանկագին գաղտնիք և հաճույքով խոստովանում է իր արարքները, քան ցույց տալիս իր ֆանտազիաները»:

Այսպիսով, դեռահասների ընկալման և հիշողության տեսակների ու առանձնահատկությունների իմացությունը կնպաստի դասի ընթացքում նրանց իմացական ոլորտի և ուսուցման գործընթացի կառավարմանը:

ԳԼՈՒԽ 2

Փորձարարական մաս

Հետազոտական աշխատանքը կազմակերպվել է Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ան.Շիրակացու անվան թիվ 6 հիմնական դպրոցում: Հետազոտությանը մասնակցել են 6-րդ դասարանի 10-11 տարեկան 19 աշակերտ, որոնցից 13-ը՝ արական սեռ, 6-ը՝ իգական: Հետազոտության նպատակին հասնելու համար կիրառվել են ընկալման և հիշողության ուսումնասիրության հետևյալ մեթոդիկաները.

1.<<Պատկերների հիշողություն>>՝ ըստ Ա. Կարելինի

Մեթոդիկան նախատեսված է պատկերային հիշողության հետազոտության համար:Մեթոդիկայի էությունը այն է, որ փորձարկվողին ցուցադրվում է 16 պատկերներով աղյուսակ՝ 20 վ-ի ընթացքում:Պատկերները անհրաժեշտ է հիշել և 1 րոպեի ընթացքում վերարտադրել թղթի վրա:

Հրահանգ: Ձեզ ներկայացվի պատկերներով աղյուսակ: Ձեր խնդիրը այն է, որ 20 վ-ում հիշեք հնարավորինս շատ պատկերներ: 20 վ հետո աղյուսակը կհեռացվի և դուք պետք է նկարեք կամ արձանագրեք(բառացիորեն արտահայտել) այն պատկերները, որոնք հիշել եք:

Թեստավորման արդյունքների գնահատումը կատարվում է ճիշտ վերարտադրված պատկերների քանակով: Մեծահասակի նորման՝ 6 ճիշտ պատասխաններ և ավելի:

2. <<Ձեր ընկալման տիպը>> (ԱրզումանյանՍ., Մկրտչյան Ս., Սարգսյան Վ. Կիրառական հոգեբանության պրակտիկում: Երևան, 2002. էջեր 360-362)

«Ձեր ընկալման տիպը»

Հրահանգ: Ստորև ներկայացված նկարների տակ գտնվող անվանումներից ընտրեք այն, որը ձեր կարծիքով ամենահարմարն է տվյալ նկարին, և գրեք դրա համարը: Արդյունքների մշակման ժամանակ օգտագործեք հետևյալ աղյուսակը:

Կ	Վ	Հ
1	2	3
4	5	6
7	8	9
10	11	12

 1

1.տիկնիկ, 2.խաղ, 3.ընկեր ություն,

4.բուրատինո, 5.հիմարություն, 6. համակրանք,

7.թմբլիկ , 8.նմանություն, 9.հետաքրքրասիրություն,

10.երեխա, 11. անհասկացողություն, 12.համոզմունք



1.նամակ, 2.խնդրանք, 3.ուրախություն,

4.պիոներներ, 5.նորություն, 6. հույս,

7.արկղ , 8.տեղեկություն, 9.տխություն,

10.աշակերտներ, 11.շնորհավորանքներ, 12.վիշտ



1.դաշտ, 2.ազատություն, 3.զարմանք,

4. աղջիկներ, 5.շարժում, 6.հետաքրքրասիրություն,

7.օդապարիկ , 8.իրադարձություն, 9.ուրախություն,

10.ընկերուհիներ, 11.հանգիստ, 12. տխրություն



1.տանիք, 2. ճարպկություն, 3.անվստահություն,

4. կատու, 5.ճկունություն, 6.հիմարություն,

7.սարյակաբույն , 8.ավազակություն, 9.խիզախություն,

10.խողովակ, 11.կողոպուտ, 12. անհոգություն

1.բակ, 2. սպորտ, 3.վիրավորանք,

4. տատիկ, 5.խաղ, 6.անտարբերություն,

7.տղա, 8.ծերություն, 9.վախ,

10. ֆուտբոլիստ, 11.չարաճճիություն,

12.տխություն

1.ճանապարհ, 2. ուղևորություն, 3. վախ,

4. ամառ, 5.ուշացում, 6.վստահություն,

7.ավտոմեքենա , 8.անհրաժեշտություն, 9.

կասկած, 10.պատանի,11.շտապողականություն,

12. անհանգստություն



1.թերթ, 2. ողջույն, 3.բարություն,

4. պուրակ, 5.հանգիստ, 6.հպարտություն,

7.անցորդ , 8.սխալ, 9.զարմանք,

10. ընթերցող, 11.շփոթմունք,

12.ուրախություն

1.պատուհաններ, 2. պահ, 3.տխրություն,

4. արջնագռավ, 5.հանգիստ, 6.հույս,

7.ժամացույց , 8.կյանք, 9. Իրարանցում,

10.սալահատակ, 11.լռություն,

12. ուրախություն

1.տղամարդ, 2. ճարպկություն,

3.ուրախություն, 4. բաղ,

5.վախճան, 6.հույս,

7.մարզիկ , 8.թռիչք,

9.անտարբերություն, 10.բնասեր

11.զվարճություն, 12.վիշտ

1.աղջիկ, 2. շարժում, 3.բավական ություն,

4. շուն, 5.ճամփորդներ, 6.ուրախություն,

7.ամառ , 8.վազք, 9. վախ, 10.արահետ,

11.հանգիստ, 12. հավատարմություն

11



1.բնակարան, 2.նմանություն, 3.տխրություն,

4.տղա, 5. ավերածություն, 6. ուրախություն,

7. ցանկապատ, 8. վախճան, 9. ափսոսանք,

10.ձմեռ, 11. զվարճություն, 12.վիշտ

12



1.աղքատ, 2.թվաբանություն, 3.տխրություն,

4. որբ, 5.ուսում, 6.կասկած,

7. ցնցոտիավոր, 8. գիտություն, 9.հիացմունք,

10.չքավոր, 11.գիտելիք, 12. հույս

Հետազոտության արդյունքներ

Ըստ պատկերային հիշողության ուսումնասիրության մեթոդիկայի արդյունքների՝ հետազոտության մասնակցած 19 աշակերտներից 10-ի մոտ արձանագրվել է պատկերային հիշողության բարձր մակարդակ, 8-ի մոտ այն գտնվում է մեծահասակի համար նախատեսված նորմայի սահմանում, իսկ 1 աշակերտի մոտ այն ցածր արտահայտվածություն ունի(տե՛ս աղ.1)

Աղ. 1

Մասնակիցներ 19 աշակերտ	
բարձր	10
նորմա	8
ցածր	1

Պատկերային հիշողությունը հատուկ արտահայտչաձև է, հիմնված դիտողական տպավորությունների վրա, որոնք թույլ են տալիս պահպանել և վերարտարել ընկալած առարկայի կամ երևույթի կենդանի պատկերը:

Ըստ ընկալման տիպի ուսումնասիրության արդյունքների՝ 8 աշակերտի մոտ ընկալման գերակա տիպ է հուզական տիպը, 5-ի մոտ՝ կոնկրետը, իսկ 6-ի մոտ՝ վերացականը:

Աղյուսակ 2

Մասնակիցներ 19 աշակերտ	
Հուզական տիպ	8
Կոնկրետ տիպ	5
Վերացական տիպ	6

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերլուծելով կիրառված երկու՝ ընկալման և հիշողության մեթոդիկաների արդյունքները՝ հանգում ենք հետևյալին.

Դասարանում առկա է պատկերային հիշողության բարձր մակարդակ, այսինքն՝ նրանց բոլորին հատուկ է ուսումնառության վիզուալ տիպը, ուստի կարող ենք ամենատարբեր հնարների ու մեթոդների կիառմամբ հեշտությամբ հասնել ցանկալի վերջնարդյունքների: Օրինակ՝ համեմատության աղյուսակներ կազմելով՝ երեխաները կարող են ցույց տալ երևույթները, նկարազարդումներով ուղեկցեն իրենց ելույթները՝ այսկերպ առավել գրավիչ դարձնելով հաղոդելիք նյութը:

Ինչպես նկատեցինք, սակայն, դասարանում 1 աշակերտ պատկերային հիշողության ցածր արտահայտվածություն ունի, իսկ այս տիպին պատկանող երեխային լավագույն արդյունքի հասցնելու համար նախ և առաջ կարևոր է հասկանալ, թե

երեխան ուսումնառության որ ոճին է պատկանում: Օրինակ՝ եթե նա հաճույքով լսում է ձայնագրություններ կամ կարդում, անհրաժեշտ է ուրեմն կիրառել մեթոդներ, որոնք համապատասխան են ուսումնառության աուդիալ ոճին:

*Ընկալման տիպի մ*ուսումնառության արդյունքների պատկերը, ինչպես տեսանք, միատրր չէր: Դասարանում գերակա հուզական տիպին (8 աշակերտ) ցանկալի է ներառել հետևյալ աշխատանքներում՝ բնագրերում գտնի գրական կերպարների արտաքինի, ներաշխարհի, բնավորության գծերի խորքային նկարագրություններ, հաղորդելիք նյութի համար համապատասխան երաժշտություն ընտրի, գտնի, վերլուծի, իր խոսքում նորովի կիրառի պատկերավորման,արտահայտչական միջոցները և այլ:

5 աշակերտին, որոնք պատկանում են ընկալման կոնկրետ տիպին, ցանկալի է հետևյալ աշխատանքների մեջ ներառել՝ մասնակցեն քննարկումների, առանձնացնեն փաստեր, թվականներ, կոնկրետ տեղանուններ, կազմեն հարցեր կամ պլան լսածի և կարդացածի շուրջ:

Եվ վերջապես՝ դասարանում 6 աշակերտ պատկանում է ընկալման վերացական տիպին: Փաստենք, որ ընկալման տարբեր գերակա տիպեր ունեցող աշակերտներ կան դասարանում, որը պետք է հաշվի առնել դասի պրոցեսում նրանց ընկալումը կառավարելիս, նյութի բացատրության ու մեկնաբանության ժամանակ:

Օգտագործված գրականության ցանկ

1.Արզումանյան Ս., Մկրտչյան Ս., Սարգսյան Վ. Կիրառական հոգեբանության պրակտիկում: Երևան, 2002. էջեր 360-362

2..Ուշինսկի Կ.Դ Մանկավարժության ուսմունք:Մոսկվա 1950թ.

3.Փիլոսյան Ս.,Ընդհանուր հոգեբանություն:Երևան 2021թ.

4. Г.Ц.Абрамова. Возрастная психологня

5. БожовичЛ.И. Подростковый возраст

6.Выготский Л. :Педологияподростка. Психологическое и социальное развитие ребенка.https://www.labirint.ru/books/781867/.

7. Карелин А. А. Большая энциклопедия психологических тестов

8. РубинштейнС.Л. Основыобщейпсихологии. 2-е изд. М., 1996.